ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 1059-Ա

ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ,ՊԱՐԻՍՊԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի պահանջով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի պահանջները, հիմք ընդունելով Մասիս քաղաքային համայնքի ավագանու 11.09.2020 թվականի N 115-Ա որոշումը. **որոշում եմ՝**

1.Մասիս քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող ՀՀ Արարատի մարզ Մասիս քաղաք 1-ին փողոց թիվ 89/1 հասցեում գտնվող տնտեսական շինությունը /մակերեսը՝ 18,8 քմ/, պարիսպը /մակերեսը՝ 6,9 քմ/ և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0,00806 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը /ծածկագիր՝ 03-003-0082-0039/ ուղղակի վաճառքով օտարել Սևան Նիկողոսյանին:

2. Տնտեսական շինության ուղղակի վաճառքի գինը կազմում է 78960 /յոթանասունութ հազար ինը հարյուր վաթսուն/ ՀՀ դրամ/ 1քմ-ի արժեքը 4200 /չորս հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ

3.Պարսպի ուղղակի վաճառքի գինը կազմում է 28980 /քսանութ հազար ինը հարյուր ութանասուն/ ՀՀ դրամ, 1քմ-ի արժեքը 4200 /չորս հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ:

4. Հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 236964 /երկու հարյուր երեսունվեց հազար ինը հարյուր վաթսունչորս/ ՀՀ դրամ /1 քմ-ի արժեքը 2940 /երկու

հազար ինը հարյուր քառասուն/ ՀՀ դրամ:

5.Հողամասը օտարելուց հետո համայնքի հողային և հաշվապահական հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություններ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

18 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թ.
Ք.ՄԱՍԻՍ